Ավետիք Իսահակյան

Ինչ ես գազազում, ի՛մ վիրավոր սիրտ

Ի՞նչ ես գազազում, ի՛մ վիրավոր սիրտ,
Որ գազազում ես, ի՞նչ պիտի անես.
Աշխարհը իրեն ճամփով կընթանա,
Դո՛ւ խեղճ, դո՛ւ անզոր, ի՞նչ պիտի անես:

Մարդն այս աշխարհում, ինչպես մի թոչուն
Անդուռ ու անել մեծ վանդակի մեջ. –
Սի՛րտ իմ, գազազիս, ի՞նչ պիտի անես
Անդուռ ու անել այս վանդակի մեջ:

Մարդ ծընված օրից գերեզմանի հետ
Շըղթայված է պիրկ, ո՛ւր էլ որ երթա. –
Սի՛րտ իմ գազազիս, ի՞նչ պիտի անես,
Ո՞ւր պիտի թըռնիս թևերիդ շըղթա:

Տոկա՛, համբերիր, ի՛մ վիրավոր սիրտ,
Վըճիտ հայացքով աշխարհին նայի՛ր.
Աշխարհը իրեն ճամփով կընթանա,
Է՜յ, վիրավոր սի՛րտ, դու մի՛ գազազիր…

1903
Ալեքսանդրապոլ